№ 53 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23 **1899** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 23 № 53

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգտակար ծրագիր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակ Սզնախից, Նամակ Ղազախի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-Թրքական բարեկամութիւն. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՕԳՏԱԿԱՐ ԾՐԱԳԻՐ

Տասը տարուց աւելի է, ինչ միտք է ծագել մի կենտրօնական միջնակարգ դպրոց հիմնելու Արպատականում այդ թեմի հայ ժողովրդի համար։ «Մշակը» առիթ է ունեցել խօսելու այդպիսի մի դպրոցի անհրաժեշտութեան մասին. նա նոյն իսկ ցուցմունքներ է արել, թէ ինչպէս և որտեղ նպատակայարմար կը լինէր հիմնել այդ դպրոցը։ Արպատականի թեմը մօտ 40,000 հայ ազգաբնակութիւն ունի. այդ թիւը օրից օր աւելանում է Թիւրքիայից փախած հայ գաղթականներով։ Ամբողջ թեմի մէջ չը կայ մի հատ փոքր ի շատէ բարեկարգ և ժամանակակից մանկավարժական պահանջներին համապատասխան միջնակարգ դպրոց. Թաւրիզում գոյութիւն ունեցող միակ չորս դասարանեան Արամեան դպրոցը իր ներկայ դրութեամբ, պայմաններով անկարող է յագեցնել կրթական այն զօրեղ ծարաւը, որ սկսել է արտայայտվել ժողովրդի մէջ. մանաւանդ վերջին տարիները, երբ առևտրական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ մեծ ծաւալ են ստացել և Պարսկաստանի քաղաքական ու ֆինանսական վիճակը շատ էլ նախանձելի չէ, կրթութեան պահանջն այնքան զօրեղացել է, որ շատերը սկսել են գաղթել ուրիշ երկիրներ յատկապէս իրանց զաւակներին ուսում տալու նպատակով։

Եւ ոչ մի տարակոյս չը կայ, որ մի միջնակարգ, կանոնաւոր դպրոց կը բարձրացնի ոչ միայն հայ ժողովրդի բարոյական մակերևոյթը, կը լայնացնի նրա մտաւոր հորիզոնը, այլ և մեծապէս կը նպաստի նրա նիւթական բարգաւաճման, և զարկ կը տայ նոյն իսկ Արպատականի երկրագործութեան, արուեստագիտութեան ու գիւղատնտեսութեան գործին, ենթադրելով, որ կենտրօնական դպրոցը կունենայ երկրագործական-արուեստագիտական բաժանմունք։ Արպատականի քրիստոնեայ (հայ և ասորի) ազգաբնակութեան մեծամասնութիւնը հողագործ է, հետևաբար ապագայ դպրոցը, բացի տեսական ուսումից, պէտք է մատակարարէ և գործնական ուսում, իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ միջնակարգ դպրոցը ունենայ երկրագործական-արուեստագիտական բաժանմունք։ Հէնց այդ նկատումներով էլ դպրոցը պէտք է հիմնվի ոչ թէ Թաւրիզում, այլ Սալմաստում, հողագործութեան, այգեգործութեան և տնայնագործութեան կենտրոնում։

Ինչպէս գիտեն «Մշակի» ընթերցողները, Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը նախաձեռնութիւն յանձն առնելով, որոշել է իրագործել կենտրօնական դպրոց հիմնելու ծրագիրը։ Անկասկած, մեծ համակրութեան արժանի է ընկերութեան նախաձեռնութիւնը, բայց անկասկած է և այն, որ այդպիսի մի մեծ ծրագրի իրագործումը բարձր է ընկերութեան ոյժերից։ Բայց որովհետև առաջին քայլը արդէն արված է և գործի սկիզբը նշանակում է գործի կէսը կատարելը, ուստի մնում է, որ Արպատականի հայ ժողովուրդը և մանաւանդ առաջնորդարանը շտապեն աջակցել ընկերութեան և միասին, միաբան ջանքերով նպաստել վաղուց սպասված օգտակար գործի աջողութեան։ Այդ տեսակէտից մենք անհրաժեշտ ենք համարում, որ Թաւրիզում գործող երկու բարեգործական ընկերութիւնները—Հայուհեաց և Արտպատականի—միանան և միացեալ գործունէութեամբ առաջ տանեն գործը։ Թաւրիզի պէս մի փոքրիկ հայաբնակ կենտրօնում. ոչ մի միտք և նպատակ չը կայ ունենալ երկու բարեգործական ընկերութիւն գործունէութեան միատեսակ ուղղութեամբ և ծրագրով։ Ներկայումս հրապարակի վրա դրված է մի կարևոր և համակրելի գործ—ժողովրդի կրթութեան գործը, միջնակարգ, կենտրօնական դպրոց բանալու ծրագիրը. այդ գործը այնքան օգտակար և մեծ է, որ ամենքը պէտք է մի կողմ թողնեն անհատական, մասնաւոր շահերը և միմեանց ձեռք-ձեռքի տալով, նպաստեն նրա իրագործմանն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Սուվորինի դէմ սկսած արշաւանքը գնալով հասարակական երևոյթի կերպարանք է ընդունում. գոնէ Պետերբուրգի լրագիրները լի են այդ հարցին վերաբերվող նամակներով, յօդուածներով։ Մենք արդէն հաղորդեցինք, որ հանրաբանական ընկերութիւնը, 35 անդամների պահանջով, վճռեց ոչինչ յարաբերութիւն չունենալ «Новое Время» լրագրի հետ։ Այդ գիտնական ընկերութեան օրինակին, աւելի խիստ ձևով, հետևեց մի այլ հիմնարկութիւն—Պետերբուրգի համալսարանում գոյութիւն ունեցող Պատմական ընկերութիւնը։ «Сынъ Отечества» լրագրում տպված է հետևեալ նամակը, որ կրում է Պատմական ընկերութեան նախագահ, յայտնի պրոֆէսօր և պատմաբան Ն. Կարէեվի ստորագրութիւնը։

Պետերբուրգի համալսարանի Պատմական ընկերութեան կոմիտեին ուղարկված է առաջարկութիւն, որ այսուհետև ընկերութեան նիստերի մասին տեղեկութիւններ չը տպվեն «Новое Время» լրագրի մէջ, և այս բանը յայտարարվի լրագիրներում։

Այդ առաջարկութիւնը արել են 21 անդամներ, որոնց մէջ կան յայտնի գիտնականներ և պրոֆէսօրներ։

Մարտի 13-ին կայացած ընդհանուր ժողովում Պատմական ընկերութիւնը, քննելով այդ առաջարկութիւնը, հետևեալ վճիռն ընդունեց. «Պետերբուրգի համալսարանի Պատմական ընկերութիւնը, մի ուրիշ յարմար միջոց չը գտնելով իր բողոքը յայտնելու «Новое Время» լրագրի անարժան վարմունքի դէմ, որոշեց. այսուհետև չը տպագրել ընկերութեան նիստերին վերաբերեալ տեղեկութիւններ այդ լրագրի էջերում և այս մասին յայտարարել ի գիտութիւն ընդհանուրի»։

Խօսելով Սուվորինի դէմ սկսված այս միաբան բողոքների մասին, «Новости» լրագիրը մի երկար յօդուածում ասում է, որ Սուվորին այժմ հնձում է այն, ինչ սերմանել է երկար տարիների ընթացքում։

Դժբախտաբար—ասում է «Новости»—լրագրի հրատարակութիւնը մեզանում չափազանց հեշտ բան է դառել։ Մարդիկ առանց կրթական ցէնզի, առանց որոշ հատկութիւնների և սկզբունքների, առհասարակ այնպիսի մարդիկ, որոնք հասարակութեան ուշադրութեան արժանանալու իրաւունք չունեն, ըսկսում են լրագրի հրատարակութիւն, բացառապէս յոյս դնելով այն բանի վրա, որ անանուն են գրվածները և տպվածները և լրագրական համբ թերթի եռևից չեն երևում ոչ հրատարակիչը, ոչ խմբագիրը, ոչ աշխատակիցները, մանաւանդ չեն երևում այն հաշիները, որոնցով այդ պարոնները զեկավարվում են իրանց գործունէութեան մէջ։ Ցեռոյ մի յայտնի չափ համարձակութիւն, նոյն իսկ ցինիզմ—և գործը արված է։ Ահա այժմ թող այդպիսի հրատարակիչները, խմբագիրները և աշխատակիցներն իմանան, որ մամուլի վրա միայն ցենզուրայի հսկողութիւնը չը կայ, որ հասարակութիւնը երկար տանում է իր վերաբերմամբ արած անճոռնիութիւնները, բայց վերջ ի վերոյ, հէնց որ դէպքը բերում է, նա արտայայտում է իր «quos ego»-ն և ցոյց է տալիս իր «կարծիքների» ինքնակոչ արտայայտիչներին նրանց իսկական տեղը։

Լրագիրը այն հատկութիւնն է յայտնում, որ Սուվորինի գլխին եկածը միմիայն այն պատճառով չէ, որ նա ուսանողական անկարգութիւնների առիթով տպագրեց իր երկու նամակները։ Բայց Սուվորին, ինչ ասել կուզի, չէ վնասում։ Այդ ամբողջ արշաւանքի դէմ նա դուրս եկաւ մի նամակով, որի մէջ նա ուզում է արդարանալ, թէ ասելով որ ինքը չէ ասել այն, ինչ վերագրում են նրան, որ իր գրուածքը եղել է շտապ և թէ յիշատակելով ռուս գրականութեան իր մատուցած ծառայութիւնները։ Նա յիշեցնում է, որ ինքը մի հաւատաս ուսուցիչ էր, բայց աշխատելով, գիրքը սիրելով հասաւ այժմեան դրութեան։ Դա ճիշդ է. բայց հրատարակչական-գրավաճառական գործունէութիւնը, որ Սուվորինի համար անգրագիտ հարստութիւն է ստեղծել, ինչ կարող է ապացուցանել այս դէպքում։ Սուվորին հարցնում է. «Ես հերոս չեմ, բայց դուք հերոս էք»։ Աւելորդ համեստութիւն. ամենքը գիտեն, որ Սուվորին հերոս է. հարցը միայն նրանում է, թէ ինչ տեսակին է պատկանում այդ հերոսը...

*

Մեզ ուղարկված է Պետերբուրգում հրատարակվող «Жизнь» անուով ամսագիրը։ Դա մի բարեխիղճ, համակրելի ուղղութեան հետևող օրգան է, որ լոյս է տեսնում հետևեալ կարգով. ամսի 1-ին գրական բաժինը, 11-ին գիտական բաժինը և 21-ին քաղաքական բաժինը։ Բելլետրիստիկայի բաժնում առանձին ուշադրութիւն է դրաւում պ. Գօրկիյ երիտասարդ վիպագրողը, որ մի կարճ միջոցում արդէն գրական յայտնի անուն է ստացել. ճկուն, պատկերաւոր ոճը, նկարագրական գեղեցիկ ընդունակութիւնը, նիւթի թարմութիւնը և հեղինակի վերաբերմունքը դէպի իր նկարագրած մարդիկն ու կեանքը, դրանք այնպիսի յատկութիւններ են, որոնք լաւ ապագայ են խոստանում հեղինակին։ Խնամքով և ուշադրութեամբ խմբագրվում են և ամսագրի միւս բաժինները։ Ի միջի այլոց, ամսագրի յունվարի համարում մենք գտնում ենք մի շատ հետաքրքրական յօդուած Պարիզի մամուլի մասին։ Ֆրանսիայի մայրաքաղաքը, ինչպէս երևում է, չէ կարող պարծենալ իր մամուլով։ Մի կողմ թողած արդէն շատ հռչակված կաշառակերութիւնը, որ այդ մամուլի ախտն է, ամսագրի թղթակիցը բերում է բազմաթիւ փաստեր՝ հաստատելու համար թէ նոյն իսկ առանց կաշառակերութեան էլ ֆրանսիական մամուլը ունի այնպիսի արժատական պակասութիւններ, որոնց չէք հանդիպի կուլտուրայով և կրթութեամբ աւելի ստոր երկիրների մէջ անգամ։ Գլխաւորն այն է, որ Պարիզի հրապարակախօսների համար ամբողջ աշխարհը միայն մայրաքաղաքի մէջ է գտնվում. այդտեղից դուրս նրանք համարեա ոչինչ չեն ճանաչում և չեն ուզում ճանաչել։ Նոյն իսկ հարևան երկիրների վերաբերմամբ նրանք զարմանալի տգիտութիւն են ցոյց տալիս։

Նրանք մեծ մասամբ ոչինչ հասկացողութիւն չունեն այն մասին, որ կատարվում է ոչ միայն Գերմանիայում, որին, սակայն, պիտի լաւ ճանաչէին իբրև թշնամու, ոչ միայն Անգլիայում, որի դէմ մի քանի կառավարական շրջաններ և չօվինիստ հայրենասէրներ 10 տարուց աւել գրգռում են հասարակական կարծիքը, ոչ միայն Ռուսաստանում, որով նրանք, իբրև դաշնակիցներ, շատ պէտք հետաքրքրվէին, այլ նոյն իսկ Էլզաս-Լոթարինգիայում, այդ «թանդագին նահանգներում», որոնց համար «հայրենիքը սուգ է պահում» և որոնց անունները միշտ պ.պ. Դէրուլէդների բերանումն են։

Եթէ այդպէս են մօտիկ, նշանաւոր երկիրների վերաբերմամբ, ինչ կը լինեն աւելի հեռաւոր, աննշան երկիրները։ Թղթակիցը լուսաբանում է այդ հարցը, բերելով մի այլ փաստ.

Երկար ժամանակ հայերին կոտորում էին Թիւրքիայում, իսկ Ֆրանսիական հասարակական կարծիքը բոլորովին ոչինչ չը գիտէր այդ մասին և դա ոչ թէ այն պատճառով, որ կատարելապէս ամբողջ մամուլն էր կաշառված, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ հեռագրական և լրագրական գործակալութիւններին «յանձնարարված էր» լռել. «Temps» լրագիրը այս կամ այն պատճառով չէր տպում իր Կ. Պոլսի թղթակցի հեռագիրներն ու յօդուածները, Journal des Débats» յայտնի է իր «համակրանքներով» դէպի Բ. Դուռը, «Matin» բանկիրների օրգան է, որոնք շահ ունեն Թիւրքիայի ֆինանսների մէջ, և, ի տարկէ, խնամքով լռութիւն էր պահպանում Թիւրքաց գազանութիւնների մասին, մի քանի ուրիշ լրագիրներ նոյնպէս լռելու պատճառ ունէին, իսկ մնացած մամուլը կամ գտնէ նրա մի մասը, որ արտասահմանեան լրագիրներ չէ կարդում և սեփական թղթակիցներ չունի, կատարելապէս անտեղեակ էր թէ ինչ է կատարվում։ Հարկաւոր էր, որ այդ հարցը յարուցվէր պատգամաւորների ժողովում, հարկաւոր էր, որ արտաքին գործերի վիճակագիր պ. Հանոտօին հարկադրէին խոստովանել թէ ճիշդ են Թիւրքական գազանութիւնները, որ մի քանի լրագիրներ նախ ընդունէին և ապա հաւատային թէ այդ գազանութիւնները «խորամանկ Ալբիոնի» սարքածները չեն, այլ իրական փաստ։

Եւ ինչու զարմանալ, որ այդպէս է, քանի որ նոյն իսկ Ֆրանսիայի ներքին նահանգներում տեղի ունեցող դէպքերի վերաբերմամբ նոյն անգիտութիւն է երևում։ Լրագիրների մեծ մասը գաւառական թղթակիցներ չունի։ Մի քանի մեծ լրագիրներ բացառութիւն են կազմում. և 79 լրագիրներից անկասկած 70-ը ապրում են այդ լրագիրների հաշվին, գողանալով նրանց լուրերը, տեղեկութիւնները, նոյն իսկ յօդուածները։ Բայց և այնպէս, չէ կարելի ուրանալ, որ մամուլը իր անգին դերն է կատարում։ Այդ բանը երևան եկաւ մանաւանդ Դրէյֆուսի գործի մէջ։ Մամուլը հասարակական կարծիք ստեղծեց, հարկադրեց, որ արդարութեան, օրէնքի առաջ խոնարհվին նոյն իսկ այնպիսի դասակարգեր, որոնց ամենից քիչ ձեռնտու էր լինել արդարադատ, օրինապահ։ Այժմեան ժամանակ ֆրանսիական ամենաաւոյժերը զգում են, որ հասարակութիւնը կարօտ է կրթութեան, ազնիւ, անշահասէր մամուլի ղեկավարութեան։ Եւ ինտելիգենտ ոյժերը միահամուռ ջանքերով աշխատում են աւելի ևս բարձրացնել տպագրական խօսքի արժէքը, տալ նրան այն ոյժը, որ ունի նա միւս քաղաքակիրթ երկիրներում։ Ֆրանսիական վերածնութիւնը ակներև է. Ֆրանսիան, իր լաւագոյն գործիչների ջանքերով, դուրս է գալիս այն տիղմից, որի մէջ նրան թաղել էին չօվինիզմը, կղերականութիւնը, ազգային մեծամտութիւնը։

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

Մարտի 10-ին

Ամսիս 7-ին կայացաւ Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողովը։ Որպէս անդամ, առաջին անգամ ներկայ եղայ ժողովին և որքան մեծ եղաւ զարմանքս, երբ տեսայ մի քանի մարդիկ միայն։ Ես կարծում էի, որ Ալէքսանդրօպօլի նման բազմահայ մի քաղաք (շուրջ 30,000 հայ) կը տար մի քանի հարիւր անդամ, բայց անցեալ տարի ընկերութիւնը ունեցել է 83 անդամ, իսկ այս տարի կորված է մինչև այսօր 47 անդրբաղիր։ Ժողովը կայացաւ 17 անդամների ներկայութեամբ (դրանց թւումն են նաև վարչութեան անդամները), որովհետև դրանցից աւելի սպասել չէր կարելի։ Գեղեցիկ ապագայ ալէքսանդրօպօլցիների բարեգործութեան և պարտաճանաչութեան, մի և նոյն ժամանակ հասարակական գործով հետաքրքրվելուն։ Երևանում հայերի թիւը հազիւ թէ այս քաղաքի բնակիչների կիսին հասնի, բայց Երևանը տալիս է 300 անդամ, այն ինչ ինքնաբաւական ալէքսանդրօպօլցիները դեռ յաւակնութիւն ունեն բարեսէր անունը կրելու։

Ժողովի զբաղման նիւթն էր, ի միջի այլոց, անդամների թիւը շատացնելու նոր միջոցներ մտածելու մասին, ուստի և ընտրվեցին մի քանի մարդիկ, որոնք պարտաւորվեցին իրանց շրջանում անդամներ գտնելու։ Սակայն ալէքսանդրօպօլցին անդամ չէ գրվում գիտակցօրէն, մարդ-

կային ընկերական պարտք կատարելու տեսակէտով՝ նա գրվում է «խաթրիչէն», երբ անդամ առաջարկողը նրան կը գովէ. այսպէս, օրինակ, քաղաքիս հարուստներից մէկին առաջարկել էին այս տարի էլ անդամ գրվել, նա յետ էր դարձրել անդորրագիրը: Պարոն նախագահը, վստահ լինելով որ փողը կը ստանայ, ինքն իր գրպանից վճարեց և անդորրագիրը պաշտօնական թղթի հետ ուղարկեց աղային: Սա, ի հարկէ, կախումն ունենալով պ. նախագահից, որպէս քաղաքագլուխից, ճարահատված, ընդունեց: Ակամայ մարդ յիշում է բանաստեղծի խօսքը.

Բայց եթէ փողէդ չահ չունի հայը,
Թքել եմ քու ալ, փողիդ ալ վրան:

Այէքանդրօպոլցի հարուստ հայը զլանում է որ և է 5 ռուբլի տալ, անդամ գրվել մի ընկերութեան, որի նպատակն է ձեռք կարկառել աղքատ, տառապող մարդկանց: Գէթ այդ բանում հոգևորականներն օրինակ դառնային, բայց, տարաբախտաբար, նրանք սիրում են խօսքով ուրիշներին բարեգործութիւն քարոզել, մինչդեռ ազահութիւնն իրանց բնորոշ յատկութիւնն է: Քաղաքի մէջ 24—28 հոգևորականներ կան, բայց նրանցից 2 հոգի հազիւ են անդամ գրվում: Արդեօք յարմար չի դայ ռուսական առածը՝ «Каковъ попъ, таковъ и приходъ»:

Բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ բացվեց «Կար ու ձեւ» դպրոց: Այս դպրոցի բացումը բաւական օգնել է օր. Օ. Անդրէասեանը: Անկեղծ շնորհակալութիւն յարգելի օրիորդին իր եռանդուն գործունէութեան համար, որը, չը նայելով իր դպրոցական պարապմունքներին, աշխատում է ազատ ժամերը գործ դնել հասարակական ասպարէզում: Եւ որովհետև սրա վերատեսչութեան տակ պէտք է լինի նորաբաց ուսումնարանը, յուսանք որ հետզհետէ պէտք է ծաղկի և ընդարձակվի այն՝ յօգուտ հասարակութեան և ի մխիթարութիւն վարչութեան ժեծարու անդամների:

Արդեօք օր. Անդրէասեանի գեղեցիկ օրինակը չի ոգևորի մեր կրթված օրիորդներին և տիկիններին, որ սրանք էլ թողնելով տնային փակված նեղ շրջանը, մտածեն հասարակական բարիքի վրա. արդեօք հոգեկան մխիթարութիւնը պակաս արժէ, քան մարմնական հաճոյքն ու մանր տափակ կեանքի վայելքը: Թաւրիզի նման պարսկական քաղաքում կանանց ընկերութիւնը հրաշքներ է գործում, իսկ մեր ռուսահայ տիկիններն ու օրիորդները մտածում են միայն իրանց արդ ու զարդի, խնճոյք ու հրաւէրների վրա և զբաղված են միայն բաժբասանքներով: Երբ արդեօք հայ կինը կոգևորվի հասարակական գործիչի բարձր գաղափարներով:

Բժ. Ն. Տէր-Սահակեանց

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Մարտի 16-ին

Մարտի 14-ին, ս. Կարապետ եկեղեցու պարտիզում, կայացաւ ընդհանուր ծխական ժողով՝ նախագահութեամբ մեր գործակալ Արշակ քահանայ Տէր-Ստեփանեանի: Չը նայելով նախօրօք եղած ծանուցումի՝ մեր երեք եկեղեցիների ծխականներից ժողովին ներկայ էր հաւեմատաբար քիչ բազմութիւն: Գործակալը, Թիֆլիսի կոնսիստորիայի կարգադրութեան համաձայն, առաջարկեց ժողովականներին վճռել՝ վերակազմել արդեօք նախկին մոմավաճառանոցը, որի արդիւնքը յատկացրած էր նախկին եկեղեցական-ծխական ուսումնարանին, թէ թոյլ տալ իւրաքանչիւր եկեղեցուն իր համար առանձին ծախել մոմ: Գործակալը իր կողմից առաջարկեց ժողովին՝ վերակազմել մոմավաճառանոցը և նրա արդիւնքը յատկացնել ս. Կարապետ մայր եկեղեցու քահանայական և եկեղեցական գանձարանին, որն այն ժամանակ կը վերացվի: Այդպիսով պէտք է ոչնչանայ քահանաների, եկեղեցու սպասաւորների և այլ նպատակների համար գանձանակը, վերապահելով եկեղեցու միաբանութեան իրաւունք՝ կամաւոր նուէր հաւաքել ընդունված խաչահամբոյրից, նոյնպէս և մայր եկեղեցու և Գրիգոր Լուսաւորչի տօներին:

Ժողովականներից Վ. Ենիկոլոփեան և Ց. Եղիազարեան, սկզբունքով համակրութիւն յայտնելով գործակալի առաջարկութեան՝ հնարաւոր չը համարեցին մոմավաճառանոցի ամբողջ եկամուտը յատկացնել քահանայական գանձարանին: Նրանք առաջարկեցին՝ տալ քահանաներին և եկեղեցու սպասաւորներին մոմի արդիւնքի որոշ մասը, իսկ մնացածը յատկացնել եկեղեցուն՝ զանազան օգտաւէտ գործեր կատարելու համար: Ժողովը ընդունեց այս առաջարկութիւնը: Այս հանգամանքը ոյժ կը ստանայ սակայն այն ժամանակ, երբ կը պարզվի նախկին մոմավաճառանոցի տարեկան եկամուտը: Մոմավաճառութիւնից գոյացած փողը պէտք է մտցնել գանձարանի խնայողական դրամարկղը, որի համար պէտք է ընտրել յանձնաժողով, և ապա ամսէ ամիս ռոճիկ բաժանել քահանաներին և սպասաւորներին:

Մի քանի ամիս առաջ մեր ծխականները վճիռ էին կայացրել՝ պահանջել երեք եկեղեցիների երէցփոխներից և նախկին հայոց ուսումնարանի հոգաբարձուներից հաշիւներ՝ սկսած 1888 թուից: Դրանց պարտաւորեցնում էին անյապաղ հաշիւ ներկայացնել՝ հակառակ դէպքում պահանջել այդ դատարանի միջոցով: Ընտրված էր հաշիւները քննելու համար յանձնաժողով եօթ անձից: Ժողովի այս վճիռը, յանձնաժողովը նոյնպէս առաջարկած էր հոգևոր իշխանութեան ի հաստատութիւն, սակայն նա չէր ընդունել վճիռը, պահանջելով, որ դուրս գցվեն դատարան դիմելու խօսքերը, քանի որ այդ վերապահված է իրան—կոնսիստորիային: Ժողովում գործակալը յայտնեց կոնսիստորիայի այս հաղորդագրութիւնը: Ժողովը համաձայնվեց, բայց բաւականացաւ պահանջել միայն վերջին երեք տարվայ հաշիւները:

Ապա Վ. Ենիկոլոփեան պահանջեց՝ դիմել կոնսիստորիային, խնդրելով՝ նշանակել նոր ընտրութիւն քաղաքի երեք եկեղեցիների երէցփոխների, քանի որ նրանց պաշտօնավարութեան ժամանակը վաղուց լրացել է: Այս առաջարկութիւնն էլ անցաւ: Վերջը գործակալը յայտնեց Վեհափառ Կաթողիկոսի շրջաբերական-հրամանը՝ ուղարկել մի ճանաւոր անձն Թիֆլիս՝ Եկմալեանի ներդաշնակած պատարագի արարողութիւնը սովորելու, որպէս զի եկեղեցում քառաձայն խումբ կազմվի: Գործակալը յայտնեց, որ աւելի նպատակայարմար է Թիֆլիսից հրաւիրել պատարագի անձն: Ժողովը համաձայնվեց:

Այսպիսով քառաձայն խումբը, նոր երէցփոխներ ընտրելը և գանձանակի վերացնելը գեղեցիկ միջոցներ են մեր եկեղեցիների բարեկարգութեան համար: Ցանկալի է, որ մեր գործակալը հոգայ և պարբերաբար քարոզներ ասելու մասին: Սղնախի պէս վրացախօս քաղաքում անհրաժեշտ է անպատճառ քարոզիչ:

Վերջապէս մեր թատերասէրները սթափվեցան: Նրանք շուտով տալու են ներկայացում՝ յօգուտ «Նղբայրական օգնութիւն Թիւրքիայում վնասված հայերին» ժողովածուի խմբագրութեան՝ ղեկավարութեամբ Սղնախի հայոց բեմի վետերան Վ. Ենիկոլոփեանի: Խաղալու են՝ «Քանդած օջախ» Սունդուկեանցի, «Էս էլ քի մօցիքլութիւն» և «Մկնիկ» վոդեվիլները: Նախաձեռնութիւնը պատկանում է բժիշկ Մ. Մովսիսեանին: Թոյլտուութիւնն արդէն ստացվել է նահանգապետից: Պէտք է ասասել, որ հասարակութիւնը, ի նկատի ունենալով ներկայացման բարձր նպատակը, կատարեալ համակրանքով կը վերաբերվի գործին:

«Մշակի» № 33-ի մէջ լոյս տեսաւ Սղնախից թղթակցութիւն «Տեղացի» ստորագրութեամբ, որի մէջ թղթակիցը անճիշդ դիտողութիւններ է անում մեր քաղաքի օրիորդների մասին: Սղնախում անչափահաս աղջիկների ամուսնութիւն երբէք տեղի չէ ունենում. դրանք հաղուագիւտ դէպքեր են: Մեր քաղաքի չափահաս օրիորդներն անդամ դժուարութեամբ են ամուսնանում, ուր մնաց, որ հերթը հասնէր մանկահասակներին: Բռնի ամուսնութիւնների մասին թղթակցի հետ կարելի է համաձայնվել միայն հասարակութեան ամենաստոր դասակարգի վերաբերմամբ: Թղթակցի օրինակ բերած մի բռնի ամուսնութեան դէպքի դէմ մենք կարող ենք տասնեակ դէպքեր առաջ բերել, երբ ծնողներն անկարող են եղել բռնի ամուսնացնել իրանց աղջիկներին: Մտրակով ամուսնացնելու ժամանակը վաղուց անցել է:

Հաշիւներ քննելու համար ընտրված յանձնաժողովը պարտաւորվեց սեփական միջոցներով բերել տալ մոմ՝ ծախելու համար, մինչև որ գոյանայ որոշ գումար մոմավաճառանոցը վերաբացելու համար:

Ց. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ՂԱԶԱԽԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Վերին-Աղդան-գիւղ, մարտի 17-ին

«Մշակի» անցեալ համարներից մէկում յայտնել էի, որ մեր գիւղի ամարանոց կազմող լեռներն իրանց մէջ մեծ քանակութեամբ հանքեր են պարունակում: Այդ բանն այժմ փաստերով հաստատվում է. մի քանի երիտասարդներ ընկերութիւն կազմելով, սկսեցին հանքեր որոնել և կարճ միջոցում կարողացան գտնել մեծ քանակութեամբ պղնձի, երկաթի, արծաթի, թթուատի և այլ հանքեր: Պատշաճաւոր դիմումներ արդէն եղած են. պակասում է միայն նախաձեռնող ոյժ և փող՝ շահագործելու այդ տեղերը. ուստի ցանկալի է, որ մեր հարուստները չասպէին այդ ոյժը հանդիսանալ:

Եղանակը մեղանում կատարեալ գարնանային է. ծառերն արդէն սկսել են ծաղկել. վարուցանքը սկսվել է. խեղճ գիւղացիներն առ այժմ մեծ յոյսով են նայում կալերին:

Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի կարգադրութեամբ, մեր դպրոցում, ի յիշատակ Ա. Ս. Պուշկինի ծննդեան հարիւրամեակի՝ դասերը կը դադարեն մայիսի 26-ին: Այդ օրը պիտի հանդէս կատարվի ի յիշատակ հանճարեղ բանաստեղծի:

Ց. ք. Սառիկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս մեզ հաղորդում են, Վեհափառ Կաթողիկոսը մտադիր է ճանապարհ ընկնել դէպի Էջմիածին հինգշաբթի, ապրիլ 25-ին:

—

Մի պարոն, որ ցանկանում է իր ազգը անյայտ պահել, ուղարկել է մեզ հինգ ռուբլի, որպէս զի այդ փողը բաժանենք աղքատներին Զատկի տօներին: Ցանկալի կը լինէր, որ բարի օրինակին հետևեն և ուրիշները:

—

Այս տարի Կասպից ծովի վրա նաւադնացութիւնը դէպի Վոլգայի բերանը սկսվեց վաղ: Նաւթով բեռնավորված նաւեր կարող կը լինեն մեծ քանակութեամբ նաւթ տեղափոխել Աստրախան և ամբարել այնտեղ մինչև Վոլգայի վրայով նաւադնացութիւն սկսելը: Ուրիշ տարիներ Վոլգայի վրա շարժվող նաւերը անկարող էին լինում առաջին իսկ օրերից նաւթ տանել դէպի Վոլգայի վերին ափերը. իսկ այս տարի նաւթի պաշարը վաղօրօք պատրաստ կը լինի և նաւերը կարող են առաջին ըէյսում նաւթ տեղափոխել դէպի հիւսիս:

—

Մենք ստացանք Ս. Մալխասեանցի մի նոր աշխատութիւնը՝ «Սեբէոսի պատմութիւնը և Մ. Խորենացի» վերնագրով, որ լոյս է ընծայվել Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ: Դա մի մատենագրական ուսումնասիրութիւն է, որի նպատակն է ապացուցանել, թէ եօթներորդ դարի կէսերում արդէն Խորենացու պատմութիւնը յայտնի էր, հռչակված և նրանից, իբրև ճշմարիտ և հաւատի ժառանգորից, օգուտ է քաղել Սեբէոս եպիսկոպոսը իր պատմութեան մէջ: Հեղինակի կարծիքով, Սեբէոսի պատմութեան սկզբում դրված երկու դպրութիւնները, որոնք համարվում են մինչև այժմ անծանօթ կամ անանուն հեղինակի գրուածքներ, գրված են Սեբէոսի ձեռքով և կազմում են նրա պատմութեան անբաժան մասերը: Գրքի գինն է 40 կոպէկ:

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը այս տարի Թիւրքիա է ուղարկում մի քանի ագրոնոմներ՝ մանրամասն ծանօթանալու համար ծխախոտի պլանտացիաներ զարգացնելու եղանակների հետ: Ապա մտադրութիւն կայ մի քանի տարին գիւղատնտեսական դպրոցներ բանալ Կովկասում, որոնց մէջ աշակերտները գլխաւորապէս կը սովորեն ծխախոտագործութիւն:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ցուցմունքներ է արել ուսումնարանական շրջաններին, թէ մայիսի 26-ին, Պուշկինի ծննդեան 100-ամեակի տօնախմբութիւնը ինչ կերպ պէտք է կատարել: Մայիսի 26-ին, բոլոր դպրոցներում բոլոր աշակերտների ներկայութեամբ պէտք է պատարագ մատուցանել և հոգեհանգիստ կատարել բանաստեղծի համար ու հանդիսաւոր ակտեր ու ժողովներ կազմել՝ արտասանելով Պուշկինի յիշատակին նուիրված ճառեր: Իսկ տարրական դպրոցներում պէտք է կազմել ընթերցանութիւններ Պուշկինի գրուածքներից և յօդուածներ կարդալ Պուշկինի մասին: Ի նկատի ունենալով ուսումնարանական պարապմունքները մայիսի 26-ին աւարտելու դժուարութիւնը, պարապմունքները կաւարտվեն նոյն ժամանակը, ինչպէս և նախկին տարիները:

—

«Русск. Вѣд.» լրագրի մէջ տպված է Մոսկվայի հավասարանի բէկտորի յայտարարութիւնը, որով հաղորդվում է ի գիտութիւն ուսանողների, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի կարգադրութեան համաձայն, հավասարանի բոլոր ուսանողները արձակվում են հավասարվում: Այն ուսանողները, որոնք չեն մասնակցում ուսանողական գործադուլին և կամենում են ուսանող մնալ այն պայմանով, որ կատարելապէս հնազանդվեն սահմանված կանոններին, պարտաւոր են յայտարարութիւն տալ բէկտորին մարտի 22-ից ոչ ուշ, վերոյիշեալ մտքով:

—

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ հինգշաբթի օր, մարտի 25-ին, ցերեկով, տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան տարեկան նիստը, որտեղ կը կարդացվեն ընկերութեան վերջին երեք տարվայ գործունէութեան տեղեկագիրները և կը կատարվեն փոխնախագահի, խորհրդի անդամների, գանձապահի և քարտուղարի ընտրութիւնները:

—

Կիրակի, մարտի 21-ին, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ օպերային երգիչ Կամիսնսկու կօնցէրտը: Հասարակութիւնը, որ լցրել էր ժողովարանի դահլիճը, ընդունեց երգչին մեծ ոգևորութեամբ: Կամիսնսկի երգեց օպերային կըտորներ և բազմաթիւ բօմանսներ և ունեցաւ կատարեալ աջողութիւն:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մարտի 28-ին նշանակված է Մարդասիրական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, պ. նահանգապետի առաջարկութեան համաձայն. այդ ժողովին պէտք է առաջարկվի ընկերութեան նոր կանոնադրութեան ծրագիրը»:

—

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Ամբողջ մի տարի է համարեա, որ Ղզլարը քաղաքային բժիշկ չունի: Չը նայած, որ Ղզլարում բժիշկների հունձը ամառ ձմեռ առատ է, բայց Թիֆլիսի բժշկական վարչութիւնը յայտնել է Ղզլարի քաղաքային վարչութեանը՝ թէ ոչ մի բժիշկ չէ համաձայնվում գալ»:

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Նորերս եկաւ Բագուից մի թուրք՝ Մամէդ Մէյթի Հաջի Մամէդ Հուսէյն օղլի անունով, որ այստեղ ունի թշնամիներ: Դրանցից մէկը՝ Միր Զաբբար Հաջի Միր Բաղիր օղլին, պատահելով նրան, կռիւ է սկսում փողոցում: Երկու կողմից էլ իսկոյն և եթ հաւաքվում են ծանօթներ հրացաններով և սկսվում է սոսկալի կռիւ երկու կողմից էլ, որի ժամանակ պարզում են մի քանի տասնեակ հրացաններ: Վիրաւորածներ եղան միայն 2 թշնամիներ՝ Մամէդ Մէյթին և Միր Զաբարը: Գործը անցաւ քննիչին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

—

Եւրոպական մամուլը վերջերս շատ է խօսում անգլօ-թիւրքական բարեկամութեան մասին: Թիւրքիան վաղուց աշխատում էր մտնելով Անգլիայի, վերահաստատել նախկին բարեկամական յարաբերութիւնները, որպէս զի Անգլիայի օգնութեամբ կարողանայ մի քիչ դրստել իր անտանելի ֆինանսական վիճակը: Կ. Պօլսի անգլիական նոր դեսպան Օ'Կոննոր, ըստ երևոյթին, տրամադրութիւն ցոյց տուեց իրագործել սուլթանի փափագը և ահա հեռագիրները սկսեցին ամեն օր հաղորդել դեսպանի սուլթանի հետ ունեցած առանձնական տեսակցութիւնների և զանազան անգլիացիներին տրված չքանչանների մասին: Ճիշդ է, Լօնդօնի լրագիրները չատպեցին հաղորդել, որ լօրդ Սալսբիւրի բացարձակապէս յայտնել է, թէ մինչև որ սուլթանը չիրագործի խոստացված բէֆօրմները Մակեդոնիայում և Հայաստանում, դժուար թէ որ և է entente cordiale հաստատվի Անգլիայի և Թիւրքիայի մէջ, բայց մի քանի ուրիշ դէպքեր ցոյց են տալիս, որ արդէն բաւական մտերիմ յարաբերութիւններ են սկսել հաստատվել երկու պետութիւնների մէջ: Այդ դէպքերի մէջ նշանաւոր է լօրդ Բօզբէրիի, անգլիական ազատամիտ կուսակցութեան նախկին պարագլխի ճանապարհորդութիւնը Կ. Պօլիս:

Լօրդը, ինչպէս գրում է «С. Петербургск. Вѣдомости» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը, եկել է Թիւրքաց մայրաքաղաքը իր սեփական չքեղ «Catania» զբօսանաւով: Նաւը խարիսխ գցեց Թօլմա-Բախչա հոյակապ պալատի առաջ. սուլթանի կողմից բարի գալուստ մաղթեց լօրդին Աբդուլ-Ռիզա-բէյ մեծ արարողապետը և հրաւիրեց նրան իջևանել պալատում, բայց լօրդը մերժեց այդ առաջարկութիւնը և մնաց իր զբօսանաւի վրա: Իսկոյն պատուոյ հիւրի տրամադրութեան տակ դրվեցին պալատական կառքերը և լօրդն սկսեց շրջել քաղաքը, իսկ երեկոյեան ներկայ եղաւ պաշտօնական հացկերոյթին, որ տրվեց անգլիական դեսպանատան մէջ և որին մասնակցում էին բոլոր թիւրք մինիստրները և օտար դեսպանները: Ոչ մի կասկած չը կայ—շարունակում է թղթակիցը—որ լօրդ Բօզ-

բէրիի դէն անակնկալ չէ Սլդրզ-Ռիսսկի համար։ Անգլիական դեսպան Օ'Կոնոր, հէնց որ հմուտ դիպլոմատի աչքով նկատեց, որ Բ. Դրան և Ֆրանսիայի փոխադարձ յարաբերութիւնները մի քիչ լարված են Կամբոնի քաղաքականութեան շնորհիւ, իսկոյն մի քանի այցելութիւններ արեց Սլդրզ-Ռիսսկին և սուլթանի հետ ունեցած իր երկարատև տեսակցութիւնների ժամանակ կարողացաւ եթէ ոչ համոզել սուլթանին Անդլիայի դէպի Թիւրքիան տածած անկեղծ յարաբերութիւնների մասին, գոնէ հասկացնել, թէ Անդլիան պատրաստ է շտկել Բ. Դրան ֆինանսական տխուր վիճակը։ Այդ օրից սկսած Օ'Կոնոր ցանկալի հիւր դարձաւ Սլդրզ-Ռիսսկում։

Դրանից էլ աւելի յարմար բոպէ չէր կարող ընտրել անգլիական դեսպանը։ Թիւրքիան այժմ սարսափելի ֆինանսական ճգնաժամի մէջ է. նա դատարկել է իր ամբողջ գանձարանը, ժողովել է ոչ միայն ներկայ, այլ և եկող տարվայ բոլոր հարկերը, բայց, այնու ամենայնիւ, անկարող է հոգալ զօրքի և բազմաթիւ պաշտօնեաների ծախսը։ Այդ պատճառով լօրդ Ռօզբէրի փառաւոր ընդունելութեան կարժանանայ սուլթանի պալատում։ Մեզ համար հետաքրքիրն այն է, թէ ինչպէս պէտք է վերաբերվի այդ ընդունելութեան սուլթանի նախկին կատաղի թշնամի լօրդ Ռօզբէրի, և ինչ օգուտներ պէտք է քաղի Անդլիան Թիւրքական այդ նոր բարեկամութիւնից։ Անշուշտ աղատամիտ լօրդ Ռօզբէրի չէ մոռացել Գլադստոնին, որի յաջորդն է ինքը, թէ նա ինչ անուն տուեց սուլթանին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, մարտի 7-ին

Իզմիրի նախկին՝ ինչպէս նաև ներկայ առաջնորդը՝ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանց, վերջապէս, խղելով այն խրացը՝ որ զինքը կապեր կաշկանդել էր Կըզըլ-Թօպրակի հետ, պիտի երթայ նորէն Բալիքարեաններու քաղաքը՝ իր նախկին թեմը։

Մելքիսեդեկ եպիսկոպոս, ի հեճուկս իր բարձրաստիճան ընկերակիցներուն, որոնք վերջնականապէս ուխտ ըրած են չի հեռանալ Վօսփորի գեղաձիծաղ ու հեշտաբոյր ափերէն, այս անգամ, գոնէ, օրինակելի վարմունք մը ցոյց տուաւ՝ լսելով զինքը կոչող իր նախկին ժողովուրդի ձայնին։

Իզմիրի օղէն է թէ ջուրէն, տեղւոյն առաջնորդները որչափ փախուստ տան՝ այնքան կը մօտենան անոր և Իզմիրցիները—զարմանալի մարդիկ—որքան կատեն իրենց առաջնորդներն՝ երբ զանոնք իրենց եկեղեցւոյ աթոռին վրա բազմած տեսնեն, այնքան կը գուրգուրան անոնց վրա՝ երբ տարիներով թափառին անոնք Պոլսի փողոցներուն մէջ։ Զարմանալի բան մ'ալ այս է՝ որ Իզմիրի առաջնորդները, երբ հեռանան իրենց վիճակէն, լինի իսկ հրաժարմամբ, այլ ևս ուրիշ տեղ չեն երթար, աշխարհ կործանի՝ իրենց տեղերէն չեն շարժիր, կամ կաթողիկոս կուզեն լինել, կամ պատրիարք և, եթէ այս երկուքին մէջ ալ չի յաջողին, ճարահատեալ նորէն Իզմիր կը դառնան և Իզմիրցիները սիրով կընդունեն զանոնք՝ մոռնալով անցեալին տխուր յիշատակները։

Իզմիրի անյիշաչար ժողովուրդը երբեմն խիստ չարաչար վարուեցաւ. Մուրադեան եպիսկոպոսին դէմ։ Իրաւունք ունէր թէ ոչ, այդ՝ նոյն ժամանակուայ պատրիարքարանի intrigue-ները միայն կարող են բացատրել, իսկ մենք, ցորքան գիտենք, կային երկուստեք պատճառներ, որ ասպարէզ բացած էին պատրիարքարանի և Մելքիսեդեկի միջև անհաշտ մենամարտի մը՝ որուն հետևանքն եղաւ վերջինին անկումը՝ ի մեծ ուրախութիւն Իզմիրցիներուն և ի մեծ յաղթանակ պատրիարքարանի։ Մելքիսեդեկ եպիսկոպոս այն ատեն ընտրուած էր կաթողիկոս, հաստատութիւնը սակայն անյաջող ելեր էր, կը սպասէր պատրիարքութեան՝ և այն խուճապելով փախուստ տուեր էր իրմէն, և ահա այժմ նոյն Մելքիսեդեկ եպիսկոպոսն է, այն ատենի Իզմիրցիներուն ատելի առաջնորդը, ինչպէս և պատրիարքարանի անհաշտ թշնամին, որ այսօր ամենէն սիրելի առաջնորդն է եղած նոյն Իզմիրցիներուն։

Կը տեսնէք մեր ազգային նկարագիրը։

Մելքիսեդեկ եպիսկոպոս հիմա Պոլսոյ մէջ իրեն յաջորդ կը թողու Իզմիրի նախորդ առաջնորդ Արսլանեան Ներսէս եպիսկոպոսը՝ որ, ինչպէս ծանօթ է, Իզմիրցիներուն վկայականովը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ՝ այնպիսի պահու մը, երբ իր ժողովուրդը զինքը չէր ուզեր ու հրաժարած ալ էր։ Սա ևս, իբրև Իզմիրի հրաժարեալ առաջնորդ, չուզեց երթալ Վան, ուր ժողովուրդը կուզէր զինքը, և պարիրքարանը որոշած էր։ Զերթալու համար ամեն կնճռոտ առարկութիւն դուրս թափեց պատրիարքարանի առջև. կըսեն թէ բարձրագոյն պաշտօնի մը թեկնածու է, թերևս Պոլսոյ պատրիարքութեան, թերևս Կիլիկիոյ կաթողիկոսութեան, թերևս... և եթէ դէպքերն անյաջող երթան, մէկ քանի տարիներէ վերջը... պատրաստ կը լինի նա դարձեալ Իզմիր երթալու իբրև յաջորդ Մելքիսեդեկի՝ որ մինչև այն ատեն, իզմիրցիներէն ճանձրացած Պոլիս կը վերադառնայ անշուշտ... մանաւանդ թէ խթանն իր հետն է... Շահպաղլեան վարդապետը։ Միւս դաւառներէն արդարև երջանիկ են իզմիրցիները. երկու առաջնորդ ունին, եթէ մէկէն ձանձրանան՝ միւսովը դոհ կը լինին։

Գիրուկ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Զուղա, փետրվարի 20-ին

Անցեալ կիրակի օրը մեր սրբազան առաջնորդը 8 հատ գիւղացի տիրացուների քահանայ ձեռնադրեց զանազան գիւղերի վրա։ Զուղայեցւոց ձեռնադրութիւնը, լսում եմ, մտադիր է Զատկից յետոյ կատարել։

Երկսեռ-ուսումնարանների հոգաբարձութեան ջանքով, ս. Վարդանանց տօնի առթիւ, նոյն երեկոյին թատերական ներկայացում պիտի տրվի յօգուտ ուսումնարանների. արդէն տոմսակները տպուած վաճառվում են. կը յուսանք յաջող ելք պիտի ունենայ։

Լսում ենք, որ մեր առաջնորդը (առաջարկութեամբ երկսեռ ուսումնարանների հոգաբարձութեան) մտադիր է հանդանակութեամբ մի օրիորդաց ուսումնարան կառուցանել, քանի որ այժմեանը (որը կուսանաց մենաստանի մէջ է գտնվում) շատ անյարմար է և անհամապատասխան ներկայ պահանջներին. տեղի անձկութեան պատճառով ամառները երեխաների մէջ զանազան տեսակ հիւանդութիւններ են գոյանում։ Լսում ենք, որ հոգաբարձութիւնը ևս մտադիր է մի վարժուհի բերել տալ Ռուսաստանից, որի ներկայութիւնը այստեղ քիչ-քիչ անհրաժեշտ է դառնում, քանի որ բողոքականները այստեղ ունեն մի քանի վարժուհի, որոնք իրենց զրաւիչ ընթացքով և բարքով ու գեղեցիկ հագուստով կարողանում են շատ հեշտութեամբ մեր միամիտ օրիորդներին գրաւել։ Ուշադրութեան արժանի է, որ մեր տեղիս ազգայիններից շատերը և քահանաներից մի քանիսը իրանց զաւակներին ուղարկում են բողոքականների ուսումնարանները, քանի որ առաւելութիւն ևս չունեն նրանց ուսումնարանները մերիններից, այլ միայն պարզ օտարասիրութիւն է և ուրիշ ոչինչ։

Փափագելի կը լինէր, որ մեր պարսկահայ և հնդկահայ եղբայրները աւելի լուրջ ուշադրութեան առնէին իրենց զաւակների կրթութեան գործը և ներկայ պարագայում իրենց առատ նպաստներով աւելի հեշտացնէին և փութացնէին օրիորդաց ուսումնարանի շինութեան գործը։

Նոր-Զուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Gaulois» լրագիրը հաղորդում է, որ ֆրանսիական «Tourning Club» անուն կրող կլուբի ժամանակորդները վճռեց հանել Զօլային իր անդամների ցուցակից։ Մի և նոյն լրագիրը հաստատցնում է, որ գեներալ Բէբիլիօ, կոմիտէի փոխ-նախագահներից մէկը, ստացաւ մօտ 1,600 խնդիրքներ կլուբի անդամութիւնից դուրս գալու մասին, եթէ Զօլան կը մնայ նրա պատուաւոր անդամ։

—Իտալական կառավարութիւնը որոշել է 3 միլիոն ծախսել վեց նաւեր կառուցանելու նպատակով՝ չինական ջրերն ուղարկելու համար։

—Բարոն Մօրէնհէյմ, Պարիզի ռուսաց նախկին դեսպանը, ասաց այս օրերս «Temps» լրագրի աշխատակցին. «Բոլորը, ինչ որ կատարվում է այժմ Ֆրանսիայում, անբնականալի է։ Մի կողմից պնդում են, որ ես գիտեմ թէ Դրէյֆուս անմեղ է, միւս կողմից հաստատում են հակառակը։ Իսկ ուղիղն այն է, որ ես չը գիտեմ, թէ մեղաւոր է նա, կամ մեղաւոր չէ և որ ես, վերջ ի վերջոյ, շատ քիչ եմ հետաքրքրվում դրանով։ Սա է իմ անկեղծ խոստովանութիւնը»։

—Կ. Պոլսից լրագիրներին հեռագրում են, որ սուլթանի պալատական բժիշկը դատապարտվեց ցմահ աքսորի՝ բժշկի կնոջ արած մատնութեան շնորհով։

—Գերմանական կառավարութիւնը շատ հետաքրքրվում է ապագայ կոնկլաւով։ Գերմանական կառավարչական շրջաններում լուրջ կերպով քննում են պապի ընտրութեան հարցը։ Թէպէտ և պրուսական թագաւորին չէ պատկանում, այսպէս անուանված, բացառական իրաւունք պապի ընտրութեան հարցի մէջ, ինչպէս Աւստրօ-Ունգարիայի, Սպանիայի և Պորտուգալիայի կաթոլիկ միապետներին և ֆրանսիական կառավարութեանը, այնու ամենայնիւ պրուսական կառավարութիւնը կը յայտնի իր ցանկութիւնը կոնկլաւին իշխան-եպիսկոպոս Կոպպի միջոցով։

—Կայիրէից հեռագրում են անգլիական լրագիրներին, որ Զէդդայում ժանտախտի սաստկանալու պատճառով, կառավարութիւնը ստիպված էր կրկին արգելել ուխտագնացութիւնը դէպի Մէկկա։ Այդ հարցը շատ փափուկ բնաւորութիւն ունի, որովհետև կառավարութիւնը գործ ունի աղգաբնակութեան ֆանատիկոս հայեացքների հետ։ Ահա լուսաբանութիւն այդ հայեացքների։ Տեղացիներից մէկը, որը պատրաստվում էր Զէդդա ուղևորվել, պատասխանեց բոլոր նախազգուշութիւններին. «Ի՞նչ անենք, թող ժանտախտ լինի։ Ես ուրախ կը լինեմ մեռնել սուրբ երկրում։»

—Նախկին անգլիական առաջին մինիստր Բօզբէրի այս օրերս ընդունվեց սուլթանից առանձին ունկնդրութեան, որից յետոյ ի պատիւ Բօզբէրիի երեկոյեան հանդիսաւոր ճաշ տրվեց։

—«С. Петерб, Вѣдомости» լրագրի մէջ կարդում ենք. «Ուէստմինստէրեան դուքսը անգլիական լրագիրներում մի նամակ հրատարակեց, որի մէջ կրկին հասարակական բարեգործութեան ուշադրութիւնն է հրաւիրում Թիւրքիայի քրիստոնեաների դրութեան վրա։ Ներկայումս,—ասում է նա,—80,000 աւելի հայեր, տղամարդիկ, կանայք և երեխաներ բացառապէս այն ողորմութեամբ են ապրում, որ բաժանում են նրանց բարեգործական ընկերութիւնները և քրիստոնէական միսսիաները։ 1895 թուից տասը տպաստարաններ հիմնվեցին այն հայ երեխաների համար, որոնց ծնողները սպանվեցին 1894 և 1895 թուերին։ Ապաստարանները գտնվում էին իրանց կեանքը մարդասիրութեան գործին նուիրած եւրոպացիների ղեկավարութեան տակ։ Այժմ համարեա բոլոր ապաստարանները փակվեցին, և ներկայումս Հայաստանի մեծ ճանապարհների վրա թափառում են անապատան, անպաշտպան և սոված մանուկներ։ Փոքրիկ դիակներով ծածկված են արդէն դէպի Եալա, Դիարբէքիր և Զէյթուն տանող ճանապարհները, իսկ այն ապաստարանները այրված են։ Կ. Պոլսի բրիտանական դեսպան Օ'Կոնորից լօրդ Սալսբիւրիի ստացած հեռագիրները հաստատում են այդ բոլոր փաստերը, որ Ուէստմինստէրեան դուքսը քաղել է իր ստացած մասնաւոր նամակներից։ Դուքսը յայտնում է, որ ամենաքիչը 2000 ֆունտ ստերլինգ է հարկաւոր հաց առնելու Հայաստանում սովից մեռնող թշուառների համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները հաղորդում են, որ Գերմանիայի դաշնակցական պետութիւնների մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց թէ պէտք է թոյլ տալ կանանց համալսարան մտնել և համալսարանական դասընթացքը լսել, եթէ նրանք կը ներկայացնեն հասունութեան վկայական։ Վերջին ձմերային սեմեստրում պրուսական համալսարաններում կային 414 կանայք, որոնցից 159 լսում էին դասախօսութիւններ պատմա-փիլիսօփայական ֆակուլտէտում, 99 հոգի նուիրեցին իրան գեղարուեստին և գրականութեանը, 72—նոր լեզուներ էին ուսումնասիրում, 48—բնական գիտութիւններ և մաթեմատիկա, 14—բժշկականութիւն, 3—ատամնաբուժութիւն, 13—իրաւաբանական գիտութիւններ, 9—աստուածաբանութիւն և 4—հին լեզուներ։ Օտարերկրացիներից 59 եկել են Ռուսաստանից, 50—Ամերիկայից։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

20 մարտի

ՊԱՐԻԶ։ Պետական խորհրդի անդամ Կատիւս նշանակվեց Ստոկհոլմի դեսպան։

ՊԱՐԻԶ։ Դատաւոր Ֆաբր վճռել է, որ պատճառներ չը կան Մօնտէյլի և «ազգային պաշտպանութեան շահերի լիգայի» ուրիշ անդամների դէմ դատաստանական գործ սկսելու։

ՇԵՐԲՈՒՐԳ։ Այստեղ եկաւ ռուսաց «Джигитъ» պատերազմական նաւը։

ՊԱՐԻԶ։ Կառավարութիւնը վճռել է դատ բանալ «Figaro»-ի դէմ այն բանի համար, որ նա հրատարակել է Դրէյֆուսի գործի քննութեան վերաբերեալ թղթերը։

ՊԱՐԻԶ։ «Figaro» տպում է in extenso Պատիզիւ-Կլամի 1899 թուի յունվարի 12 և 13-ին քրէական դատարանին տուած ցուցմունքները։ Նա պնդում է, որ Դրէյֆուսի գործի վերաբերմամբ՝ Էստերհազի միշտ վարվել է բարձր իշխանութեան հրամանների համաձայն, և որ այդ ագիտացիայում բոլորովին խառն չէ եղել։

Մի ոմն Օզուֆ երէկ Բուլոնեան անտառում սպանեց ատրճանակով մի անցորդի։ Օզուֆը խելագար է։ Կարծում են, որ նա մտադիր է եղել սպանելու նախագահ Լուբէին։

Կ. ՊՕԼԻՍ։ Ինչպէս հաղորդում է «Agence Constantinople» Ուսկիւբից, Զերնօչեկա և Կապիլինա պահականոցների սահմանի մէջև մի քանի սերբիացիներ հրացան են արձակել Թիւրքաց մի տասնապետի և զինուորի վրա։ Առաջինը սպանված է, իսկ երկրորդը վիրաւորված։ Սկսված է քննութիւն։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Ի նկատի ունենալով արտասահմանում տարածված լուրերը՝ Դանիայի քաղաքական ծրագիրների մասին արևելեան Ասիայում, «Բիցաու գործակալութիւնը» ապացուցանում է, որ արևելեան-ասիական ջրերը նաւեր ուղարկելու նպատակն է միայն Սիամի և Չինաստանի հետ յարաբերութիւնները ամրացնել և զուրկ է որ և է քաղաքական նպատակներից։

ՋԻԲՈՒԹԻ։ Մարշանի զօրաբաժինը մարտի 11-ին հանդիսաւոր կերպով մտաւ Ադդիս-Աբէբ։ Ամեն տեղ Եթովպիայում զօրաբաժնին դիմաւորեցին ուրախութեամբ։ Ֆիբուզի նա կը դայ ապրիլի վերջին թուերին։ Երկաթուղին շինելու աշխատանքները վերսկսվեցին։ Ամեն տեղ հանգստութիւն է տիրում։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Մարտինից, որ գնացել էր Սիբիր Անրիի մասին տարածված վերջին լուրերը ստուգելու, ստացվեց Ցօմսկից, մարտի 19-ից հետևեալ հեռագիրը. «Ես հարց ու փորձ արի Լեալինին, որը ինձ հաւատացրեց, որ մի քանի տունդուղներ լուր են բերել, թէ նրանք գտել են երեք դիակ, նմանապէս մի մեծ ծածկոց մի ինչ որ մեծ առարկայի համար, որի վրա կարած էր մի մետալից չինած ցանց։ Դիակները հագած ունէին սպիտակ հագուստ, որը նման չէր ռուսաց հագուստին և կօշիկների մէջը մաղեղէնով էր ծածկված։ Գնում եմ Կրասնօեարսկ և այնտեղից ոսկէ հանքերը։ Մարտին»։

21 մարտի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրագործութեան մինիստրի կարգադրութիւն։

«Ի նկատի առնելով լեռնային ինստիտուտի ուսանողների մէջ վերսկսված անկարգութիւնները, որոնք արգելում են ուսումնարանական պարապմունքների կանոնաւոր ընթացքը, այդ ինստիտուտի բոլոր ուսանողները արձակվում են։ Ցետ ընդունելու պայմանների մասին ցուցմունքներ են արված ինստիտուտի իշխանութեանը։

ԽԱՐԿՕՎ։ Հինգ օր գործը քննվելուց յետոյ, Սկիտսկի եղբայրները դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի 12 տարով։

ՊԷԿԻՆ։ Լի-Խունգ-Զանգ կրկին եկաւ այստեղ։

ԲԵՐԼԻՆ։ Norddeutsche Allg. Zeitung» լսել է, որ Գերմանիան առաջարկութիւն է արել՝ Սամոա կղզու վրա բոլոր վէճերը վերջնականապէս կարգի դնելու համար կազմել մի յանձնաժողով, որը բաղկացած կը լինի երեք պետութիւններից իւրաքանչիւրի առանձին պատուիրակից։ Մակկինլէյ զարմանք է յայտնել և ցաւակցութիւն Ասիայում տեղի ունեցած ընդհարումների առիթով։ Ամերիկական ներկայացուցչին առաջարկված է վարվել այնպէս, որ պահպանված լինի status quo առանց տեղիք տալու ապագայ ընդհարումների։

ՊԱՐԻԶ։ Բարոնուհի Հիրշ վախճանվեց։

ՊԱՐԻԶ։ Մարշանի միսիան մարտի 11-ին հասաւ Էլկոտս։

Ոստիկանական կոմիսարը «Figaro»-ի խմբագրատանը քննութիւն կատարեց Դրէյֆուսի գործին վերաբերեալ թղթերը հրատարակելու առիթով. արձանագրեց խմբագրի մերժումը՝ ցոյց տալ, թէ որտեղից է ստացել դոկումենտները։

ՍՕՖԻԱ։ Ինչպէս հաղորդում է Agence Bulgarie» լրագիրը, իշխանը ստորագրեց հրովարտակ՝ որով յետ է կանչվում Կ. Պոլսից Բոլգարիայի դիպլոմատիական գործակալ Մարկով։

ՀՌՕՄ։ Բժշկապետներ Մաղցօնի և Լապօնի երեկոյեան պապի մարմնի վրա արած օպերացիայի տեղից կորեցին կաշին 5 սանտիմետր երկարութեամբ։ Պապը ոչ մի ցաւ չը զգայ։ Օպերացիայից առաջացած վէրքը կապվում է. վիրակապը վերցրած է. սպին ծածկեցին սպեղանիով։ Ընդհանուր դրութիւնը բաւարար է։ Պապը կարող կը լինի շուտով պատարագ մատուցանել Ս. Պետրոսի եկեղեցում։ Մաղցօնի կայցելի պապին եկող հինգշաբթի։

22 մարտի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լեռնային ինստիտուտի խորհրդից։

Ինստիտուտից արձակված ուսանողները, որոնք կը ցանկանան յետ ընդունվել հաստատված կանոններին կատարելապէս հնազանդվելու պայմանով, պարտաւոր են ոչ ուշ մարտի 26-ից ուղարկել պօստով, ինստիտուտի դիրեկտօրի անուան յայտարարութիւն համապատասխան մրցքով և խնդիրք ինստիտուտ ընդունվելու համար, կցելով մուտքի տոմսակը և հասցէն։ Ցետ ընդունելը կախված կը լինի ինստիտուտի իշխանութեան հայեցողութիւնից։ Որոշ ժամանակամիջոցում յայտարարութիւններ և խնդիրքներ չը տուողները, նոյնպէս և նրանք, որոնց խնդիրքները չեն յարգվի, իրանց դոկումենտները կը

ստանան տանը. նոյնպէս տուն կուղարկվեն մուտքի տոմսակները նրանց, որոնք կընդունվեն ինստիտուտ։ Ինստիտուտ ընդունված ուսանողները թոյլ կը տրվի քննութիւններ բռնել, որոնք կը սկսվեն մարտի 29-ին և կը վերջանան մայիսի 24-ին։

ՊԱՐԻԶ։ «Figaro» լրագիրը շարունակում է հրատարակել քրէական ատեանի ձեռքով կատարած քննութիւնը։ Առաւօտեան կը տրվի Կավէնեակի ցուցմունքների վերջին մասը։ Ցուցմունքների մէջ ապացուցանվում է, որ միայն Դրէյֆուսին կարող էին յայտնի լինել զօրդէբու

թած գոկումենտները։ Կոմիսարը արձանագրութիւն կազմեց, որով հաստատում է հրատարակութեան տալու փաստը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մ ա ր դ ա տ ա ր № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ յերեկվայ 4 ժամին և 15 րոպէին, Թ է ֆ լ ի ս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բ ա թ ո ւ մ է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին։

Մ ա ր դ ա տ ա ր № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թ է ֆ լ ի ս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բ ա թ ո ւ մ է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մ ա ր դ ա տ ա ր № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 30 րոպէին. Թ է ֆ լ ի ս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բ ա գ ո ւ է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թ է ֆ լ ի ս է հասնում առաւօտեան 9 ժամ 55 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բ ա գ ո ւ է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ը՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և մանասեռական հ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
112—150 Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԾԱԽՎՈՒՄ Է

Կամ ՏՐՎՈՒՄ Է ԿԱՊԱԼՈՎ ԳԻՒՂԱԿԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ (ԱՊՏԵԿԱ) յարմար պայմաններով։ Դիմել նամակով կամ անձամբ պրօվիզօր Սէդերշտրէմին։ Сел. Шильда, Телавскаго уѣзда. պատասխանի համար դնել 7 կօպ. մարկա։
(Ե. ո. Ե.) 2—3

ԲԺԻՇԿ Յ. Յ. ՂՕԿԻԵԼԵԱՆ

Ընդունում է՝ վեներական, ախտական, մորթու և ներքին հիւանդութիւն ունեցողներին՝
Առաւօտեան 9—12 ժամը
Երեկոյեան 5—7 ժամը։
Գանձակայա փողոց, տուն Մարգարովի, № 31։
(Ե. հ. չ.) 16—100

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌՔ» պատկերը և Բրտեանի «ՌԱՄԿԱԿԱՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ» գիրքը գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել Ալէքսանդրօպոլ՝ Յակոբ Էլբաղեանցին։
(չ. Ե. հ. չ.) 2—4

ԿԱՖԷ ՋԻԼԼԷՐ
(Café Siller)

Վիէննա, I. Laurenzerberg. Մեծ և էլեկանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ։ Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն։ 24—25

Լոյս տեսաւ
ՅՈՐԻՒԹԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ
Հրատարակութեան I գրքոյկը։
ԳԻՆՆ Է 30 ԿՕՊԵԿ
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская, д Маркарова № 25а, իսկ Բագուում.—Խիդէկէլի գրավաճառանոցին։ 10—10

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Վ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Միքայէլեան փողոց, տ. № 93. տելեֆոն № 506։ (Հ.) 16—45

Վաճառվում է
ՆՈՐԵԿ
ՎԷՊ ԲԱԲԿԵՆՑԻ
Գինը 70 կօպէկ։
Հարցնել Կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։ (Ե. ո.) 7—10

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարան

(Մէջին փողոց, տ. Տէր-Ասատուրովի, Ադելխանեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9։ Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը։ Մուտքը 2 կօպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար։ 23—50

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԶԷՑԹՈՒՆ
տեղագրական, աղգագրական, վարչական տեսութիւն։ (Արտատպած «Մշակից» մի քանի յաւելումներով)։ Գինը 20 կ.։
Դիմել այս հասցէով. А. Аракеляну, Редакція «Мшакъ». (չ. ո.) 9—10

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆՆ Է 20 ԿՕՊԷԿ
Գնել ցանկացողները պէտք է դիմեն «Մշակի» Խմբագրատուն։ 10—10

ՌԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ՝
մանաւանդաբար բգի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան 9—11 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գոլովինսկի պրոսպ. № 28, տ. Աղաժովի։ 15—15

Զգուշացէք կեղծումներից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. Ի Ի Ր Գ Է Ն Ս
Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, կեղտն բծերը, պուզիկները և պտուկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։
Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ագաուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի և Գրիվնակի, պ.պ. Պոպովների և Արիստակովի մօտ։
(13, 27) 2—24

Вышла и разослана подписчикамъ книга 1—2 (Январь—Февраль)
ЖУРНАЛА
„НАЧАЛО“.

СОДЕРЖАНІЕ КНИЖКИ: 1. „Воскресшіе боги“. Леонардо да Винчи. Романъ. I—Ш. Д. С. Мережковскаго. 2. „Моя муза“. Стихотвореніе. Тана. 3. „Въ какой мѣрѣ ученіе Будды проникнуто песимизмомъ“. ? Рѣчь Сергѣя Ольденбурга. 4. Стихотвореніе. Д—на. 5. „Митрошкино жертвоприношеніе“. Изъ разсказовъ о голодномъ годѣ. Ник. Рубакина. 6. Стихотворенія. С. Яхонтова. 7. „Итальянскій скептицизмъ въ эпоху возрожденія“. I. Е. В. Тарле. 8. „Морисъ Метерлинкъ“. Зин. Венгеровой. 9. „Помѣщики“ (Der Grabenhäger). Романъ Вильгельма фонъ Поленцъ. I—Ш. Переводъ съ нѣмецкаго З. Журавской. 10. „Заработная плата и земельная рента въ русскомъ земледѣльческомъ хозяйствѣ“. П. Маслова. 11. „Клотильда“. Повѣсть. Н. Гарина. 12. Попытки артельной организаціи крѣпостныхъ крестьянъ“. Изъ этюдовъ о крѣпостномъ хозяйствѣ. Петра Струве. 13. Стихотворенія. С. Яхонтова и Д—на. 14. „Къ вопросу о капиталистической эволюціи земледѣлія“. С. Булгакова. 15. „Споры о фабрикѣ и капитализмѣ“. (Моимъ критикамъ). М. Туганъ-Барановскаго. 16. „Что такое „оскудѣніе центра“?“ В. Іонова. 17. „Земство и регулированіе сельско-хозяйственнаго найма“. Е. Варба. 18. „Отголоски русской жизни“. Взаимоотношеніе общественныхъ классовъ въ современной Россіи.—Полоцкая „дама пріятная во всѣхъ отношеніахъ“ и ея проектъ спасенія Россіи отъ капитализма.—Дикая выходка г. Невскаго въ газетѣ „Уралъ“. —Изумительный „вопросъ“ г. Владиміра Вельскаго.—„Оживленіе„ въ Курской губерніи.—Entente cordiale между чествованіемъ юбилея г, Евгенія Маркова въ Воронежѣ и торжествомъ открытія тамъ же маслобойнаго завода.—Проповѣдь „малыхъ дѣлъ“ со стороны „семидесятника“ г. Дардаева на страницахъ „Сибирскаго Листка“, В. Богучарскаго. 19. „Письма изъ провинціи“. 1) Изъ Саратова. (Земское собраніе и земцы). N. X. 2) Изъ Чернигова. (Подвальныя жилыя помѣщенія). С—ва. 3) Изъ Тамбова. Опекуны и благодѣтели. (Картинки земской жизни). Виктора Чернова. 20. „Среди бельгійскихъ рабочихъ“. Два дня въ Вервье. В. Тотоміанца. 21. „Иностранное обозрѣніе“. 1898 годъ. А. Р. 22. „Художникъ-интеллигентъ“. (Н. А. Ярошенко 25 іюня 1898 г.). М. Невѣдомскаго. 23. „Изъ Англіи“. Воина и Миръ Д. Сатурина. 24 „Новыя книги“. 25. „Къ характеристикѣ вліянія неурожая на жизнь деревни“. П. Румянцева. 26. Новый опытъ „экономической гармоніи“. Н. Каблуковъ „Объ условіяхъ развитія крестьянскаго хозяйства въ Россіи“. М. 1899 г.), Б. Авилова. 27. „Внутреннее обозрѣніе“. (Взгляды всеподданнѣйшаго доклада министра Финансовъ о государственной росписи на причины крестьянскаго обѣднѣнія.—Финансовое благополучіе и крестьянское обѣднѣніе.—Бюрократически-либеральное отрицаніе крестьянскаго самоуправленія и общины.—Высочайшій манифестъ и „Основные положенія о составленіи, разсмотрѣніи и обнародованіи законовъ, издаваемыхъ для Имперіи со включеніемъ Великаго Княжества Финляндскаго“.—Значеніе этаго акта.—Отношеніе къ нему Финляндскихъ учрежденій и финляндскаго общества.

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА: Подписная цѣна съ доставкой и пересылкой на годъ 10 р., на полгода—5 р., на 3 мѣс.—2 р. 50 к., Безъ доставки и пересылки на годъ—9 р., съ пересылкой заграницу на годъ –12 руб.

Принимается подписка въ главной конторѣ журнала: С. П. Б.. Малая Итальянская, д. 5, кв. 25 и въ отдѣленіяхъ конторы: въ библіотекѣ Черкесовой (О. Н. Поповой), Невскій. 54, и въ книжномъ складѣ А. М. Калмыковой, Литейный 60. въ Москвѣ—въ отдѣленій конторы „Книжное дѣло“, Моховая, д. Бенкендорфъ, и въ магазинѣ „Трудъ“ на Тверской улицѣ. Книга 1—2 въ отдѣльной продажѣ продается вовсѣхъ книжныхъ магазинахъ по 1 р. 50 к.
1—1 Редакторъ-издательница А. А. ВОЕЙКОВА

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЖЕНЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°
1—26

Իմ մագազինը փոխադրելով Դօբրժանսկու տունը, արքունական թատրոնի դիմաց՝ նշանակել եմ
Ս. ԶԱԼԻՆՕՎԻ
ՄԱԳԱԶԻՆ
ՄԵԾԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ
Զինաստանի և Եապօնիայի գործիքների, զանազան գեղեցիկ իրեղէնների և բակեռներ շրջանակների համար։ Մշտական գնողների ցանկութեան համաձայն՝ ստացված է չորրորդ պարտիա սինդապուրեան անանաս և թէյ՝ Պօպօվի, Պերլօվի, Վօգաուի, Բօտկինի և սեփական Ֆիրմայի։ Մէկ ֆունտ թէյ առնողին տրվում է ½ դիւժին բաժակ կամ ուրիշ ընծայ։ Տելէֆօն № 501.
5—5 (հ. շ. Ե. հ. շ.) Ա. Զալինով

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 31 մարտի (12 ապրիլի), ՄԻՆԴՐԷԼԻ չոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի և Մայաուրաձէ քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլուբիակինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենզոնին։
(Ե. հ. չ.) 14—20



Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
250 նկարով։ Գինն է 50 կօպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (Ե. ո.) 25—50

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Марта 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.